EUROPEAN UNION

Empowered lives.
Resilient nations.

Ամսաթիվ՝ 26 սեպտեմբերի, 2016

Հայաստանի Հանրապետության Կառավարության և
Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի միջև
Համաֆինանսավորման Համաձայնագրի Փոփոխություն N 1

Հղում է կատարվում Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Կառավարություն) և Միավորված ազգերի զարգացման ծրագրի (այսուհետ՝ ՄԱԶԾ) միջև Համաֆինանսավորման համաձայնագրին՝ կնքված 2012 թվականի օգոստոսի 27-ին, «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի Բազրատաշեն, Բավրա և Գոգավան անցման կետերի արդիականացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման կապակցությամբ,

հաշվի առնելով, որ Ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման նպատակով Կառավարությունը ապահովել է փոխառության լրացուցիչ ֆինանսական միջոցներ ՝ Եվրոպական ներդրումային բանկից (ԵՆԲ) 534,000 (հինգ հարյուր երեսուն չորս հազար) եվրո գումարով;

հաշվի առնելով, որ Կառավարությունը լրացուցիչ ֆինանսավորումը կտրամադրի համաֆինանսավորման հիմունքներով վերը նշված Ծրագրի նպատակների համար;

հաշվի առնելով, որ Կողմերը ցանկանում են փոփոխել համաձայնագրի համապատասխան հոդվածները;

ելնելով վերոգրյալից՝ Կողմերը սույնով համաձայնում են, որ 1-ին հոդվածի 1-ին մասը կշարադրվի հետևյալ կերպ.

«Կառավարությունը պարտավորվում է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով և համապատասխանաբար Կառավարության, ԵՆԲ –ի, ու ՀՆԳ-ի միջև ֆինանսական համաձայնագրերը ուժի մեջ մտնելուց և Կառավարության կողմից ԵՆԲ-ից և ՀՆԳ-ից հիշյալ դրամական միջոցները ստանալուց հետո, ՄԱԶԾ-ին հատկացնել 42,850,000 (քառասուն երկու միլիոն ութ հարյուր հիսուն հազար) եվրո գումար»:

Համաձայնագրի մնացած բոլոր դրույթներն ու պայմանները, բացառությամբ սույն փոփոխության, կմնան անփոփոխ և լրիվ ուժի ու վավերականության մեջ:

Այս փոփոխությունը ուժի մեջ է մտնում այն պահից, երբ ՄԱԶԾ-ն կառավարությունից ծանուցում է ստանում այն մասին, որ այն ավարտել է սույն փոփոխությունը ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ իրավական ընթացակարգերը:

ՀՀ Կառավարության համար՝

Անուն և պաշտոն՝ Պարոն Վարդան Արամյան, ՀՀ Ֆինանսների նախարարի պաշտոնակատար

Ստորագրություն՝

Ամսաթիվ՝

Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի համար՝

Անուն և պաշտոն՝ Պարոն Բրեդլի Բուսետտ, ՄԱԶԾ մշտական համակարգող Հայաստանում

Ստորագրություն՝

Ամսաթիվ՝ 26.09.2016թ.